Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

**www.freebooks.do.am**

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

# ՕՄԱՐ ԽԱՅԱՄ

# ՕՍՄՐ ԽՈՍՅՍՍ

## ԲԱՌԱՅԱԿԱՆ

ԳԻՐՔ ՄԻՐԳ
ԷՄԻՆԻ

ՀԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՖՕՀԱՅՈՑ

ԵՐԵՎԱՆ
«ՍՊԵՏՐԻՊ»
1993

ԳՄԴ 84.5 Իրան—5
0--473

*Պարսկերենից տողացի թարգմանեց, վերջաբանը և ծանոթագրությունները գրեց*
**ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՋՄՈ՝ ՅԱՆԸ**

**Օմար Խայամ**

Ռոբայաթ. Օմար Խայամ, թարգմ. Գևորգ Էմինի .— 0—473 Նաիրի, 1993— 44 էջ:

Ռոբայի. այդպես են անվանում պարսկական պոեզիայի հնագույն ձևերից մեկը: Ռոբայի (հոգն. ռոբայաթ) արաբերեն նշանակում է քառյակ: Այս գրքում ներկայացված են Օմար Խայամի լավագույն քառյակները:

4703020200 (2)
Խ————————————
705(01)92

ԳՄԴ 84.5 Իրան—5

ISBN 5—550—00801—7

© «Նաիրի» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1993

* * *

Գինուս կուժը դու կոտրեցիր, Աստված իմ.
Բախտիս դուռը դու փակեցիր, Աստված իմ,
Իմ ալ գինին դու թափեցիր, Աստված իմ.
Ես եմ խմում՝ դո՞ւ հարբեցիր, Աստված իմ:

* * *

Այս աշխարհում խելոք ու լուրջ պիտի լինես,
Խելքը՝ գլխիդ և լուռ ու մունջ պիտի լինես,
Քանի ականջ, աչք ու լեզու տեղում են դեռ,
Էն գլխից կույր և համր ու խուլ պիտի լինես:

* * *

Ես չգիտեմ՝ նա, ով տվեց ինձ շունչ-հոգի,
Ինձ Դրախտի համա՞ր երկնեց, թե՞ Դժոխքի.
Գավը, սիրունն ու քնարն ինձ կանխիկ տվեք—
Ձեր ապառիկ Դրախտը ձեզ լինի, հոգի:

* * *

Օդը մեղմ է, օրը՝ պայծառ ու մաքուր,
Վարդի դեմքից ցողը փոշին է մաքրում.
Դեղին վարդին թեքված սոխակը գինով
Շշնջում է. «Ճիշտը հարբելն է կյանքում...»:

* * *

Տիկնիկ ենք մենք, ճակատագիրը՝ դերասան,
Պատկեր չէ սա, այլ՝ հավաստի և իրական,—
Մի քանի օր կխաղանք այս բեմ-աշխարհում,
Մինչ մեզ նորից նետեն սնդուկն անէության:

* * *

Եթե մեզ վարդ բաժին չընկնի—փուշն էլ բավ է,
Եթե կրակ բաժին չընկնի—լույսն էլ բավ է,
Եթե ոչ շեյխ լինի, ոչ քուրձ, ոչ մենաստան,
Ժամի զանգը և Հարության հույսն էլ բավ է:

* * *

Ո՛վ օրենսգետ, մենք քեզանից ջանասեր ենք այս աշխարհում.
Թեև՝ հարբած, սակայն սթափ խելքի տեր ենք այս աշխարհում,
Մենք՝ խաղողի արյունը ալ— մարդկանց արյունն ես դու խըմում,—
Խղճով ասա, մե՞նք, թե՞ դու ես արյունախումն այս աշխարհում:

* * *

Երազիս մեջ մի իմաստուն ասաց ինձ,
Թե ոչ մի մարդ խեր չի տեսել դեռ քնից.
Իսկ ինչ պիտի անես, երբ քո մահը գա,—
Խմիր, քանի... արթնանում ես դեռ քնից...

* * *

Ոչ դրախտը, ոչ դժոխքը— դեռ չի տեսել ոչ ոք, սի՛րտ,
Դեռ հանդերձյալ այն աշխարհից ետ չի դարձել ոչ ոք, սիրտ,
Ինչքան հույս ու հավատ ունենք, մենք վստահել ենք մեկին,
Ու անունն ու ինչ լինելը՝ դեռ չի պարզել ոչ ոք, սի՛րտ:

* * *

Գոռոզությունը անցնում է գինուց,
Կնճռոտ հարցերը լուծվում են գինուց,
Սատանան, մի կում թե գինի խմեր՝
Խոնարհում կաներ մարդ-աստծուն հնուց:[1]

* * *

Եթե իմ ձեռքը հասներ ճակատագրի տախտակին,
Կգրեի այն նորից՝ համաձայն իմ տենչանքի.
Կջնջեի մեկընդմիշտ այս աշխարհից հոգս ու ցավ,
Բարձրացրած իմ գլխով այս կամարը երկնքի:

* * *

Քանի որ իմ աշխարհ գալը իմ կամքով չէր այս աշխարհում.
Եվ անմուրազ հեռանալը— իմ կամքով չէ այս աշխարհում,
Վեր կաց, գոտիդ ամրացրու և գինի բեր ինձ, մատռվակ,
Որ աշխարհի ցավը խեղդեմ այս գինով լի կուժ-կուլայում...

* * *

Ասում են, թե արգելված է գինի խմել Շաբան* ամսին,
Արգելված է Ռաջաբին** Աստծուն ձոնված հատուկ ամսին.
Շաբան—Ռաջաբ՝ ամիսներն են Աստծո և Մարգարեի—
Ռամազանին մենք կխմենք— մեզ պատկանող միակ ամսին...[2]

* * *

Հավատից մինչև անհավատություն—չնչին մի պահ է,
Կասկածից մինչև հավաստիություն—չնչին մի պահ է.
Երջանիկ ապրիր, թող ուրախ անցնի պահն այդ անցավոր—
Քանի որ կյանքի իմաստը միակ— հենց այդ մի պահն է:

---

* Մահմեդական լուսնային տարվա 8-րդ ամիսն է, ծոմը խրախուսվում է:

** Մահմեդական լուսնային տարվա 7-րդ ամիսն է, ծոմը աստվածահաճո է:

* * *

Խալամ, հարբած ես թե անուշ գինուց,— երջանիկ եղի՛ր,
Եթե հարբած ես սիրունի սիրուց— երջանիկ եղի՛ր,
Ամեն բանի վերջն անէությունն է այս փուչ աշխարհում,
Կարծիր, թե... չկաս, բայց քանի որ կաս՝ երջանիկ եղիր:

* * *

Մատուվա՛կ, վարդն ու սեզն այս դուրեկան,
Տես, մի շաբաթ անց, ինչ օրը ընկան,
Խմիր, վարդ քաղիր— զի մեկ էլ տեսար—
Այս սեզը՝ չոր հարդ, վարդը՝ հող դարձան...

* * *

Նորուզի սյուքը ալ վարդին լավ է,
Սիրահար զույգը թարմ մարգին լավ է.
Հերիք դարդ անես անցածի մասին—
Այսօրվա օրն է ամենից լավը:

* * *

Թե ձեռքըս հասներ անիվին բախտի,
Ցած կնետեի նրան իր թախտից,
Եվ կստեղծեի ուրիշ մի անիվ,
Որ մարդ տեր դառնար իր ուզած բախտին:

* * *

«Դրախտն,— ասին,— հուրիներով է անուշ».
Ես ասի. «Լոկ խաղողի հյութն է անուշ».
Առ Կանխիկն ու Ապառիկից ձեռ քաշիր—
Հեռվից է լոկ դհոլի ձայնը անուշ...

* * *

Ինչքան ընկեր քիչ ունենաս, այնքան լավ,
Ինչքան մարդկանց քիչ մոտենաս— այնքան լավ,
Ում այս կյանքում քո բարեկամն ես կարծում,
Նա է քո դեմ, կույր մի լինի, նյութում դավ:

* * *

Նրանք, ովքեր իմաստությամբ կյանքի գաղտնիքը բացեցին,
Եվ Աստծո մեծ էության մասին խոսքեր շռայլեցին,
Ոչ գաղտնիքի թելը գտան, ոչ էլ կծիկը քանդեցին,
Նախ՝ խելքներին զոռ տվեցին, հետո... աչքերը փակեցին...

* * *

Հավերժության գաղտնիքը մութ ոչ դու գիտես և ոչ էլ՝ ես,
Ոչ դու կարող ես վերծանել գրերն այս մութ, և ոչ էլ՝ ես.
Իրականը՝ քողի ետև եղած զրույցն է միայն,—
Երբ քողն ընկնի՝ էլ չենք լինի այս աշխարհում ոչ դու, ոչ՝ ես:

* * *

Մի ռենդ* տեսա՝ խանի սեմին նստած մոլոր,
Ոչ գյավուր էր, ոչ՝ մուսուլման հավատավոր,
Ոչ ճշմարիտ շարիաթ ուներ, ոչ էլ՝ հավատ,—
Կա՞ր Այս ու Այն կյանքում սուֆի** այդքան հզոր:

* * *

Երեկ գիշեր քարին տվի խաս կուժը ես,
Հարբած էի, երբ ջարդեցի այս կուժը ես,
Կուժը դարձավ ու մարդկային լեզվով ասաց.—
«Քեզ պես էի, դու էլ վաղն ինձ կնմանվես...»:

---

* Շրջմոլիկ, թափառական, գինետան ամենօրյա հաճախորդ, խորհրդանշում է ազատամիտ և կրոնին հակադրվող անհատ:

** Միստիկական ուսմունքի հետևորդ: Նրանց վերջնական նպատակն է միանալ աստծո հետ և անէանալ նրա մեջ:

* * *

Գարնանը, երբ մանուշակի թուփն է ծաղկում,
Վարդի թփին զեփյուռը չանգ* է նվագում.
Նա է սթափն, ով կնոջ հետ արծաթամորթ
Խմում է ու գինու գավը՝ քարին զարկում:

* * *

Գինետանը հարցում արի ես մի ծերից.
«Ի՞նչ լուր,— ասի,— այս աշխարհից մեկնողներից...».
«Խմիր,— ասաց,— մեզ պես քանիսն են գնացել,
Եվ նրանցից դեռ չի դարձել ոչ ոք նորից»:

* Տավիղ, վին

* * *

Երբ կյանքն անցել է, վերջացել.— Բալխ* ու Բաղդադ՝ բառեր են սին,
Երբ լցվել է գավն ու թափվել.— դառն ու քաղցր— բառեր են սին.
Դարդ մի անի, մեզնից հետո լուսինը դեռ շատ կդառնա—
Լիալուսնից՝ նորալուսին, նորալուսնից՝ լիալուսին:

* * *

Մենք կանք-չկանք՝ աշխարհը կա ու կմնա,
Եվ մեզանից հետք ու անուն էլ չի մնա,
Երբ չկայինք՝ աշխարհը բան չէր կորցրել,
Երբ չլինենք՝ նա էլի նույնը կմնա:

---

* Քաղաք Աֆղանստանի տարածքում:

* * *

Այն պալատում, ուր Բահրամը քեֆ էր անում,
Հիմա եղնիկն ու առյուծն են ճագեր հանում.
Բահրա՛մ, որ գուռ էիր որսում քո ողջ կյանքում,
Տեսա՞ր, ինչպես գուռը որսաց քեզ աշխարհում:[3]

* * *

Երեկ գիշեր բրուտի մոտ մտա մի ծեր,
Տեսա երկու հազար խոսուն ու լուռ կժեր.
Նույն հարցն էին տալիս նրանք. «Ո՞ւր եք, ասեք,
Կուժ սարքողներ, կուժ ծախողներ, կուժ առնողներ...»:

* * *

Մեզանից ո՞վ մեղք չի գործել այս աշխարհում, ասա,[4]
Թե չի գործել, ո՞նց է ապրել այս աշխարհում, ասա,
Եթե դու իմ վատին վատով պատասխանես, Աստված,
Ինչումն է մեր միջև եղած տարբերությունն, ասա:

* * *

Առ այս գավը՝ Նոռուզի կակաչի պես արնագույն,
Կակաչադեմ կույսի հետ խնջույք արա ողջ կյանքում.
Խմիր, հարբիր, քանի դեռ երկնակամարը կապույտ
Քո աչյունը չի խառնել այս հողի հետ արնագույն:

* * *

Ամեն վատ-լավ, որ մարդու էությունից է գալիս,
Ամեն խինդ-ցավ, որ մարդու բնությունից է գալիս,
Բախտի վրա մի բարդիր, քանզի անիվը բախտի
Քեզնից հազար անգամ խեղճ ու անճար է ավելի:

* * *

Եթե քո կյանքի գեթ մի պահն անցնի,
Չթողնես— առանց խնդության անցնի...
Կյանքի իմաստը՝ հենց ինքն է, որ կա,—
Ինչպես որ ապրես՝ այնպես էլ կանցնի:

* * *

Գարուն, թե ձմեռ, քնած, թե արթուն,
Կյանքի գիրքը մեր թերթվում է, հատնում,
Խմիր և հիշիր խոսքը հաքիմի,
Վշտերը թույն են, գինին՝ հակաթույն...

* * *

Ո՛վ անտեղյակ՝ այս աշխարհքից,— ոչինչ ես դու, դու չկաս,
Քամին է հիմքը քո կյանքի— ոչինչ ես դու, դու չկաս.
Քո գոյությամբ ընկած երկու անգոյության արանքում
Որպես Ոչինչ՝ Ոչնչի մեջ— ոչինչ ես դու, դու չկաս:[5]

* * *

Անձրդ ֆալաքի հոգսերին մի տա,
Հոգիդ անցավոր վշտերին մի տա,
Թե տալիս ես՝ քեզ գինուն տուր, յարին,—
Քո կյանքն անցավոր զուր քամուն մի տա։

* * *

Այն բրուտը, որ հունցում է կավը,
Թե խելքը գլխին զննի այդ կավը.
Չի հունցի նրան, բռունցք ու ոտով՝
Իր նախնիների հողն է այդ կավը։

* * *

Տեր, դու ես իմ կավը հունցել—ես ինչ անեմ,
Բուրդը դու ես մանել—գործել, ես ինչ անեմ,
Այն ամենը, ինչ կա իմ մեջ—թե լավ, թե վատ—
Իմ ճակատին դու ես գրել— ես ինչ անեմ:

* * *

Այն փոշին, որ տրորում ես քո ոտքի տակ,
Եղել է մի արևադեմ, լույս Արուսյակ,[6]
Զգույշ սրբիր թևքով փոշին քո երեսից,
Ո՞վ գիտե, նա ո՞ր նազելու դեմքն է ծերմակ...

* * *

Մի կաթիլ ջուր էր— և մի ծով դարձավ.
Փոշի էր՝ հողին ձուլվեց— միացավ.
Քո աշխարհ գալու իմաստն ի՞նչ էր, մարդ.—
Աննշան մի ծանծ, որ... անտես դարձավ:

* * *

Օ՜, բախտի անիվ, ամեն չարիք քո քենից է գալիս,
Անարդարության բիրտ արհեստը քո հնից է գալիս.
Թե վաղը բացեն քո կուրծքը, որ սև կուրծքն է մայր հողի.
Ինչ գանձեր ասես, որ չեն գտնի քո սրտում գաղտնալից...

* * *

Թե ես մոգերի գինուց ֆարբաշ եմ— այդպես եմ, որ կամ.[7]
Սիրահար, գյավուր և կռապաշտ եմ,— այդպես եմ, որ կամ.
Ամեն մի թայֆա իր կարծիքն ունի կյանքում իմ մասին—
Թե ո՞վ եմ, կամ՝ ի՞նչ— ես ինքս գիտեմ— այդպես եմ, որ
կամ...

* * *

Ինձ իմաստուն կոչեց դիտմամբ իմ թշնամին,
Աստված՝ վկա, սուտ են խոսքերն այդ ու քամի...
Քանի որ ես ընկել եմ այս խուցը ցավի,
Հեչ չլինի՝ գիտեմ, թե ով եմ ես, կամ՝ ինչ։

* * *

Երկնակամարից վատ արարքներ ու վատ վարք սպասիր,
Այս աշխարհը փուչ՝ բարեկամներից դատարկ իմացիր.
Ինչքան կարող ես— եղիր այնպիսին, ինչպիսին որ կաս—
Ոչ Երեկ տենչա, ոչ Վաղվան ձգտիր, Այսօրվան հասիր:

* * *

Ափսոս, որ իմ ջահելության գիրքը թերթվեց— վերջացավ,
Եվ իմ կյանքը— հազար ափսոս — վաղ գարնան պես շուտ անցավ,
Երջանկության հավքն այն, որին ջահելություն են կոչում,
Ե՞րբ երևաց, ե՞րբ ծլվլաց ու ե՞րբ չվեց՝ չիմացա...

* * *

Ես մեծ գավերով գինին կխմեմ,
Երկու գավ ավել ինձ կնվիրեմ,
Նախ... ապահարզան կտամ իմ խելքին,
Իսկ հետո գինուն կնության կառնեմ...

* * *

Երբ մեռնեմ, դուք ինձ գինով լվացեք,
Եվ գավը ձեռքին ինձ թալղին* ասեք,
Թե հարության օրն ինձ գտնել ուզեք,
Գինետան շեմի փոշում փնտրեցեք:

* Աղոթքի արարողություն հանգուցյալի վրա:

* * *

Շեյխը հարբած մի պոռնիկի հայ էր տալիս.
«Մեկ սրա հետ, մեկ նրա հետ ման ես գալիս»:
Կինն ասաց. «Շեյխ, ես այն եմ, ինչ ասում ես դու,
Իսկ դու ա՞յն ես, ինչ որ կյանքում ցույց ես տալիս...»:

* * *

Թեև մզկիթ ես կարիքից դրդված եկա,
Բայց չկարծեք, թե նամազի համար եկա,
Այն սեջադեն, որ գողացել եմ այստեղից,
Մաշվել է... նոր սեջադեի համար եկա:

* * *

Այս աշխարհին ի՞նչ օգուտ իմ աշխարհ գալուց,
Կամ ինչ օգուտ՝ այս աշխարհից իմ գնալուց,
Գոնե մեկն իմ զույգ ականջից մեկին ասեր,
Թե ինչ իմաստ՝ մեր այս գալուց ու գնալուց:

* * *

Այս կուժն՝ ինձ պես սիրով տարված է եղել,
Սիրունի սև ծամին գերված է եղել,
Կժի վզին փարված այս կանթը սիրուն,
Հեռք է, որ իր յարին փարված է եղել...

* * *

Այն, ինչ տեսար ու հայեցիր— ոչինչ է,
Ինչ ասացիր ու լսեցիր— ոչինչ է.
Կուզես արար աշխարհն անցիր— ոչինչ է.
Սողա, մուլք ու կայք կուտակիր— ոչինչ է...

* * *

Նա, ով խելքով առաջնորդվի այս աշխարհում,
Միևնույնն է՝ թե... եզ կթի այս աշխարհում,
Նախընտրելի չէ՞՝ հիմարի շորեր հագնի,
Նույն գնով են երբ սոխն ու խելքը վաճառում:

* * *

Մի ձեռքին գինի, մյուսում՝ Ղուրան,
Մերթ հարամ ենք մենք, մերթ՝ հալալ միայն.
Այսպես, փիրուզի այս երկնքի տակ
Ոչ թունդ գյավուր ենք, ոչ՝ զուտ մուսուլման:

* * *

Երեխա էինք՝ հասուն այր դարձանք,
Բայց դրանից էլ մի խեր չտեսանք.
Կուզե՞ս իմանալ՝ թե վերջն ո՞ւր հասանք՝
Ջրի պես եկանք,— քամու պես անցանք:

* * *

Մի գավ գինին հարյուր սիրտ ու հավատ արժե,
Մի կում գինին մի չինական պալատ արժե,
Նրա մի կում դառնությունը—ինչ լալ— հակինթ,
Հազար ու մի քաղցր կյանք ու լազաթ արժե:

* * *

Մի բրուտանոց մտա մեր տան կից,
Տեսա, բրուտը կավի մեծ կույտից
Կժերին՝ գլուխ ու կանթ է սարքում—
Շահի գլխից ու աղքատի ձեռքից...

* * *

Քանի որ հիմա շահ չկա խելքից,
Եվ անխելքն է լոկ օգտվում կյանքից,
Գինի լից, թող իմ խելք-միտքը տանի—
Գուցե քաղցրանա աչքը ֆալաքի:

* * *

Երեխա, ջահել, թե ծեր անկենդան,
Իրար ետևից կգան ու կերթան,
Աշխարհն ո՞ւմ մնաց, որ ո՞ւմը մնա—
Գնացին, կերթանք. կգան ու կերթան...

## ԿՐԿԻՆ ԽԱՅԱՄԻ ՀԵՏ

«Նա երբեք հակում չի ունեցել ընտանեկան կյանքի նկատմամբ և ժառանգներ չի թողել: Այն, ինչ որ մնացել է նրանից, քառյակներ են և արաբերեն ու պարսկերեն լեզվով գրված երկեր՝ փիլիսոփայությունից...»: Այսպես է ներկայացնում Օմար Խայամին 15-րդ դարի պարսիկ հեղինակ Ահմադ Թաբրիզին:

Զնայած մոտ 9 դար է մեզ բաժանում Օմար Խայամից և այս ընթացքում ժողովուրդը հասցրել է նրա կերպարը պատել ավանդազրույցների շղարշով, այնուհանդերձ մեզ հասած որոշ կենսագրական տեղեկություններ վերականգնում են նրա կյանքի ընդհանուր պատկերը:

Ծնվել է Խորասանի նահանգի Նիշապուր քաղաքում 1048 թ. մայիսի 18-ին, «երբ Արեգակը և Փայլածուն անցնում էին Երկվորյակների համաստեղությամբ»: Հայրը վրանագործ էր, որտեղից և գալիս է նրա «Խայամ» գրական կեղծանունը: Նիշապուրում, որը 11-րդ դարում Իրանի մշակութային կենտրոններից մեկն էր, Խայամը ստացել է իր սկզբնական կրթությունը, իսկ հետագայում իր գիտելիքները կատարելագործել է Սամարղանդի և Բալխի գիտական կենտրոններում՝ մաթեմատիկայի, երկրաչափության, աստղագիտության, փիլիսոփայության, աստվածաբանության, բժշկության և այլ բնագավառներում:

Շուտով Խայամի համբավը տարածվում է Իրանում և Միջին Ասիայում: Բազմաթիվ հարուստ ավատատերեր, որոնք, տաղանդներին հովանավորելով, փայլ ու հեղինակություն էին տալիս իրենց արքունիքներին, մրցակցում էին նրանց տիրանալու համար:

1074 թ. Սելջուկյան հզոր սուլթան Մալեք-շահը հրավիրում է Խայամին հիմնադրելու և գլխավորելու Սպահանի արքունական աստղադիտարանը: Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը տեղեկացնում է. «Դարի լավագույն աստղագետները, որոնց թվում Օմար Էբն Էբրահիմ Խայամը ... սուլթան

Մալեք-շահի համար հիմնեցին աստղադիտարան, որը իր գոյությունը պահպանեց մինչև Մալեք-շահի մահը (1092)»:

Մալեք-շահի և նրա վեզիր, հայտնի քաղաքական գործիչ Նեզամ ալ-Մոլքի մեկենասության մոտ քսան տարիների արդյունքը եղան Խայամի հաշվարկած նոր և ճշգրիտ տոմարը (որը սկսվում է գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին), մաթեմատիկական, փիլիսոփայական և այլ երկեր:

Սուլթան Մալեք-շահի և Նեզամ ալ-Մոլքի մահից հետո սկիզբ առան պալատական խարդավանքները և բամբասանքը: 13-րդ դարի արաբ հեղինակ Ալ-Ղիֆթին գրում է. «Օմար Խայամը՝ դարի գիտնականը, հունական գիտությունների գիտակը, կշտամբում էր մարդկանց նրանց հավատի համար և, երբ նրա ժամանակակիցները բացահայտեցին նրա գաղտնիքները, որոնք նա թաքցնում էր, ապա նա վախեցավ իր արյան համար և իր գրչի և լեզվի սանձերը ձգելով, ուխտագնացություն (հաջ) կատարեց Մեքքա, վախից և ոչ թե աստվածավախությունից... Ուխտագնացությունից վերադառնալուց հետո, նա առավոտից մինչև երեկո գընում էր աղոթատեղեր, ջանալով (այդ կերպ) թաքցնել իր գաղտնիքները...»:

Հասկանալի է, որ մոլեռանդ հոգևորականության սուր աչքից չէին կարող վրիպել ոչ նրա մատերիալիստական հայացքները, ոչ էլ ազատախոհական գաղափարները, որոնք դուրս էին գալիս նրա գիտական-փիլիսոփայական երկերից և քառյակի ձևով շրջում ժողովրդի մեջ:

Քառյակը (ռոբայի) Իրանում ամենասիրված և ժողովրդական բանաստեղծական ձևն է: Քառյակի սեղմ ու սահմանափակ չորս տողերում փիլիսոփայական մտքեր արտահայտելու համար բանաստեղծից պահանջվում էր մեծ հմտություն և տաղանդ: Օմար Խայամը, որ միայն այդ ժանրով է ստեղծագործել, հասցրել է այն իր զարգացման գագաթնակետին և մտել համաշխարհային գրականության մեջ, որպես քառյակի անգերազանցելի վարպետ:

Երբ 19-րդ դարում եվրոպական արևելագետները սկսեցին թարգմանել Օմար Խայամի քառյակները, պարզվեց, որ դրանցից շատերը նրան չեն պատկանում: Ամենայն հավանականությամբ շատ անանուն բանաստեղծներ են՝ իրենց ուժերը փորձել քառյակով, որը գնացել է թափառելու Խա-

յամի անունով: Քանի որ մինչև այսօր չի հայտնաբերվել Խայամի քառյակների վաղ շրջանի հավաստի ձեռագիր, և համեմատական ու վիճակագրական մեթոդներով դրանց պատկանելությունը վերականգնելու տեքստաբանների բազմաթիվ փորձերը համարյա արդյունք չեն տվել, այդ քառյակները ընդունված է անվանել «Խայամյան թափառող քառյակներ»:

Փորձենք Խայամի գիտական և փիլիսոփայական երկերի օգնությամբ գտնել նրան պատկանող քառյակների բանալին:

Իր հանրահաշվական վերլուծության առաջաբանում Խայամը գրում է. «Մենք շատ գիտնականների կործանման վկան ենք եղել, որոնցից ընդամենը մի փոքրաթիվ, բայց բազմաչարչար խումբ է մնացել: Դաժան ճակատագիրը խոչընդոտում էր, և նրանք չէին կարողանում կատարելագործել և խորացնել իրենց գիտելիքները. իսկ նրանց մեծ մասը, ովքեր այսօր գիտնականի տեսք ունեն, ճշմարտությունը զգեստավորում են կեղծիքով, դուրս չեն գալիս խարդախության և երեսպաշտության սահմաններից...»:

Ահա այդ նույն մտքերի պատկերավոր տարբերակումը քառյակներում.

**Նա, ով խելքով առաջնորդվի այս աշխարհում,**
**Միևնույնն է՝ թե... եզ կթի այս աշխարհում.**
**Նախընտրելի չէ՞ հիմարի շորեր հագնի,**
**Նույն գնով են. երբ սոխն ու խելքը վաճառում:**

Առաջին հայացքից սա «հիմարության գովք է», բանականությունից ու խելքից հրաժարվելու կոչ: Սակայն երրորդ տողում նուրբ հեգնանքը վերջաբանում փոխվում է սուր երգիծանքի, դիպուկ բնութագրելով Խայամյան ժամանակների կենսաձևի բարոյական հիմքը և չափանիշները՝ «խելքի դիմաց սոխ, իսկ հիմարության՝ ոսկի»:

**Քանի որ հիմա շահ չկա խելքից,**
**Եվ անխելքն է լոկ օգտվում կյանքից,**
**Գինի լից, թող իմ խելք-միտքը տանի**
**Գուցե քաղցրանա աչքը Ֆալաքի:**

Հասկանալի է, որ գինու թեման խայամյան քառյակներում միայն խորհրդանիշ է և հեռու է խմիչքի նկատմամբ կիրք լինելուց: Այն կոչ է աշխարհիկ հաճույքների և ընդվզում կրոնական քարոզների և շարիաթի օրենքների դեմ:

Գինու թեման Խայամի մոտ նաև հետադարձ հայացք է դեպի Իրանի հնագույն կրոնը, որը նույնպես Իսլամին հակադրվելու միջոց էր: Ինչպես հայտնի է, զրադաշտականությունը չէր արգելում խմիչքը: Դեռ ավելին: Նրանց սուրբ գրքում՝ Ավեստայում, ներբողվում էր հաոմա կոչվող ըմպելիքը, որն օգտագործելուց հետո աղքատը իրեն այնքան հզոր էր զգում, ինչպես հարուստը: Սակայն բացի գինուց մարդկանց հավասարեցնող ավելի հզոր ուժ կա: Դա մահն է:

**Մի բրուտանոց մտա մեր տան կից,**
**Տեսա, բրուտը կավի մեծ կույտից**
**Կժերին՝ գլուխ ու կանթ էր սարքում—**
**Շահի գլխից ու աղքատի ձեռքից...**

Բրուտը նյութական աշխարհի շրջապտույտի կենդանի վկան է: Նա մարդկային փոշին կժի է վերածում:

Խայամի փիլիսոփայական երկերից մեկում արտահայտած այն թեզը, որ երկնային լուսատուները չեն ստեղծվում և չեն ոչնչանում՝ հաստատվում է նրա քառյակների շարքում:

**Մենք կանք-չկանք՝ աշխարհը կա ու կմնա,**
**Եվ մեզանից հետք ու անուն էլ չի մնա,**
**Երբ չկայինք՝ աշխարհը բան չէր կորցրել,**
**Երբ չլինենք՝ նա էլի նույնը կմնա:**

Խայամը չի շրջանցել նաև բարոյագիտության հարցերը: Բազմիցս շեշտվում է չարիքի ստեղծման գործում աստծո պատասխանատվության խնդիրը:

**Տե՛ր, դո՛ւ ես իմ կավը հունցել, ես ինչ անեմ,**
**Բուրդըս դու ես մանել-գործել, ես ինչ անեմ,**
**Այն ամենը, ինչ կա իմ մեջ— թե լավ, թե վատ,**
**Իմ ճակատին դու ես գրել— ես ինչ անեմ:**

Ժամանակը և միջավայրը հանճարների կյանքի ողբերգությունն են: Նրանք ավելի խորն են զգում իրենց դարաշրջանի հակասությունները և նրանցից ամեն մեկին թվում է, թե իրեն է բախտ վիճակվել ապրելու դարի ճգնաժամային պահը: Չկա՛ բանաստեղծ առանց իր ժամանակի, չկա՛ բանաստեղծ առանց իր միջավայրի: Խայամը մի կողմից դուրս է գալիս միջնադարյան մտածողության սահմաններից և հասնում աստվածուրացության, իսկ մյուս կողմից՝ հաստատում իր միջնադարյան մտածողությունը:

Խայամյան իրարամերժ գաղափարների, անլուծելի առեղծվածների տանջալից փնտրտուքի փայլուն հանրագումարն է հետևյալ քառյակը.

**Մի ձեռքին գինի, մյուսում՝ Ղուրան՝**
**Մերթ հարամ ենք մենք, մերթ հալալ միայն,**
**Այսպես, փիրուզի այս երկնքի տակ,**
**Ոչ թունդ գյավուր ենք, ո՛չ զուտ մուսուլման:**

* * *

Ասում են՝ չկա մարգարե իր հայրենիքում...

Օմար Խայամը, որն Իրանում հայտնի էր որպես գիտնական, համարյա թե, անհայտ էր որպես բանաստեղծ:

Ո՞րն էր դրա պատճառը:

Խայամի կենսագրությունից հայտնի է, որ նա միշտ եղել է հոգևորականության ուշադրության կենտրոնում, և որ նրա ստեղծագործությունները անընդունելի են եղել իսլամական գրաքննությանը և դուրս են մղվել պարսկական գրականությունից: Բացառված չէ նաև այլ վարկած: Խայամյան քառյակները իրենց ռացիոնալիստական ոգով, պարզ ու անպաճույճ ոճով, կտրուկ հանգով չէին համապատասխանում միջնադար-

յան քերթողական արվեստի կանոններին և հետևաբար չէին գնահատվում դրանց գիտակների կողմից: Այնուհանդերձ, երբ 1859 թ. Օմար Խայամի 101 քառյակները անգլիացի գրող-բանաստեղծ Է. Ֆիցջերալդի թարգմանությամբ գերեցին Եվրոպան, Խայամը կրկին վերադարձավ հայրենիք:

* * *

20-րդ դարի սկզբից մինչև օրս հայ ժողովուրդը բազմիցս անդրադարձել է Խայամյան քառյակներին: Ժամանակի հետ փոխվում են գեղագիտական չափանիշները, բանաստեղծական արվեստի լեզուն և ոճը: Այդ է պատճառը, որ ամեն մի սերունդ իրեն իրավունք է վերապահում նորից և նորից անդրադառնալու դասականների թարգմանությանը:

Այսօր մենք հայ ընթերցողին ենք ներկայացնում Խայամյան քառյակների վերջին թարգմանությունը, որպես դարավոր մշակույթի տեր երկու ժողովուրդների բարեկամության գրավական:

**ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՋՄՈՅԱՆ**

## ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սատանան մի կում գինի թե խմեր՝

Խոնարհում կաներ մարդ-աստծուն հնուց»:

Ըստ Ղորանի (2,32), Մոհամմադը բոլոր երկնային արարածներին հրամայել է խոնարհվել Ադամի առջև: Բոլորը ենթարկվել են աստծո կամքին, բացի սատանայից՝ Էբլիսից: Նա անիծվել և վտարվել է դրախտից: (էջ 9):

2. «Ռամազանին մենք կխմենք — մեզ պատկանող միակ ամսին»:

Ռամազանին առաքվել է Ղորանը, Մոհամմադը ստացել է իր առաջին հայտնությունը (Ղորան 2,181), ծոմը պարտադիր է վաղ առավոտից մինչև ուշ երեկո: Ուտել թույլատրվում է գիշերը: Այս քառյակը մարտահրավեր է Ղորանի պատվիրաններին: (էջ 11):

3. «Բահրամ, որ գուռ էիր որսում քո ողջ կյանքում,
Տեսար, թե ոնց գուռը որսաց քեզ աշխարհում»:

Այստեղ բառախաղ կա. գուռ նշանակում է ցիռ (վայրի էշ), նաև՝ գերեզման: Բահրամ շահը, որ ցիռի հայտնի որսորդ էր, դարձավ գուռի, այսինքն՝ գերեզմանի բաժին: (էջ 19):

4. «Մեզանից ո՞վ մեղք չի գործել այս աշխարհում, ասա»:

Ըստ ավանդության, երբ Խայամը աստծո կողմից պատժվել է Նրա դեմ ըմբոստանալու պատճառով, դիմել է Նրան այս խոսքերով: (էջ 20):

5. «Որպես Ոչինչ՝ Ոչնչի մեջ—ոչինչ ես դու, դու չկաս»:

Խալամյան նիհիլիզմի ցայտուն արտահայտություններից մեկն է: (էջ 22):

6. «Եղել է մի արևադեմ, լույս Արուսյակ»:

Արուսյակը (Զոհրա-Վեներա) ըստ մահմեդական ավանդության հրապուրել է հրեշտակներ Հարութին և Մարութին, իմացել կախարդական խոսքը և բարձրացել երկինք: Նա ուղեկցում է մոլորակների խումբը և հայտնի է «Երկնային երաժիշտ» անունով: Զոհրան գեղեցկության, բարի համբավի խորհրդանիշ է: (էջ 24):

7. «Թե ես մոգերի գինով հարբած եմ, այդպես եմ, որ կամ»:

Միջնադարյան Իրանում գինու առևտրով զբաղվում էին զրադաշտականները: Առևտուրը կատարվում էր քաղաքի ծայրամասերում, ավերակ տներում, որոնք կոչվում էին «խարաբաթ»: «Մոգերի գինին խմելը» բանաստեղծական պատկեր է, որն արտահայտում է ընդվզում մահմեդական օրենքների դեմ: (էջ 26):

Գրական-գեղարվեստական հրատարակություն

# ՕՄԱՐ ԽԱՅԱՄ

## Ռոբայաթ

Литературно-художественное издание

# ОМАР ХАЙЯМ

## Рубан

Խմբագիր՝ Ն. Մ. Թովմասյան
Նկարիչ՝ Հ. Ի. Մամյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Լ. Բաղդասարյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բուլաթյան